ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 11 - 01
14.02.2011թ.

ՀՀ Արդարադատության նախարար,
պարոն՝ Հ. Թովմասյանին

ՀՐԱՏԱՊ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը նվիրված է «Արթիկ» ՔԿՀ-ում պահվող դատապարտյալ Նիկոլ Փաշինյանի արտաքին աշխարհի հետ շփման՝ նամակագրության և ՔԿՀ-ի վարչակազմի միջոցով դիմումների ներկայացման իրավունքի իրացմանը: Դիտորդական խումբը, Նիկոլ Փաշինայնի նամակագրության և դիմաումների ուղարկման հետ կապված խնդիրը ուսումնասիրել է և եկել այն եզրահանգման, որ դատապարտյալի նամակագրության և իր իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներ, բողոքներ հղելու իրավունքները կոպտորեն խախտվում են ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ-ում հետևյալ պատճառաբանությամբ և հիմնավորմամբ.

Նիկոլ Փաշինյանի նամակագրության հետ կապված առաջին այցելությունը դիտորդական խմբի նախագահ՝ Արթուր Սաքունցի և խմբի անդամ՝ Էդմոն Մարուքյանի կողմից կատարվել է 2011 թվականի հունվարի 9-ին կիրակի օրը: Նշված այցելության ժամանակ խմբի անդամները պարզել են, որ դատապարտյալ՝ Նիկոլ Փաշինյանը փակ ծրարներով առնվազն 10 նամակ է հասցեագրել «Հայկական Ժամանակ» թերթի խմբագրություն, որոնցից ոչ մեկը չի ուղարկվել և նշված նամակները պահվել են «Արթիկ» ՔԿՀ-ի վարչակազմի մոտ: Բնականաբար այդ նամակները որևէ տեղ չեն գրանցվել և հետագայում դրանց վերաբերյալ «Արթիկ» ՔԿՀ-ի վարչակազմի պարզաբանումը եղել է այն, որ Նիկոլ Փաշինյանը որևէ նամակ իրենց չի հանձնել, որպեսզի իրենք ուղարկեն:

Նույն այցելության ժամանակ դիտորդական խմբի անդամները պահանջել են, որպեսզի իրենց ներկայությամբ Նիկոլ Փաշինյանի «Հայկական Ժամանակ» թերթի խմբագրությանը հասեագրված նամակը «Արթիկ» ՔԿՀ-ի վարչակազմը ստանա և գրանցի ուղարկելու նպատակով: Ինչը կատարվել է, և խմբի անդամների ներկայությամբ «Արթիկ» ՔԿՀ-ի վարչակազմի ներկայացուցիչը ստացել է նամակը և գրանցել համապատասխան

ՀՀ Երևան, Պուշկինի 3, 2-րդ հարկ, 5-րդ սենյակ Pushkin str., 3 build, 2nd floor, 5th room
Yerevan, RA Tel / fax: (+37410) 55 96 34 e-mail: pmg.armenia@hra.am

գրանցմատյանում, որից հետո մի քանի օր անց «Հայկական Ժամանակ» թերթի խմբագրությունը ստացել է ծրարը և Նիկոլ Փաշինյանի հոդվածը տպագրվել է թերթում:

Վերը նշված այցելությունից հետո դիտորդական խումբը շարունակաբար ահազանգեր է ստացել, որ Նիկոլ Փաշինյանի նամակները, ինչպես նաև «Արթիկ» ՔԿՀ-ի վարչակազմին և այլ պետական և ոչ պետական մարմիններին հասցեագրված նամակները դատապարտյալից չեն վերցվում, այնուհետև պնդում են, որ նա նամակներ կամ դիմում բողոքներ ուղարկելու փորձ չի կատարել:

«Հայկական Ժամանակ» թերթի 2011 թվականի փետրվարի 10-ի համարում տեղեկություն է տպագրվել այն մասին, որ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը շարունակում է հրաժարվել ընդունել և առաքել «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր, Նիկոլ Փաշինյանի նամակները, անգամ՝ պաշտոնական գրությունները: Դատապարտյալն իր կնոջ՝ Աննա Հակոբյանի հետ հեռախոսազրույցում տեղեկացրել է, որ «Արթիկ» ՔԿՀ վարչակազմը հրաժարվում է ընդունել անգամ ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանին և ՔԿՀ-ներում մոնիտորինգ իրականացնող դիտորդական խմբի ղեկավար Արթուր Սաքունցին հասցեագրված գրությունները: Ինչ վերաբերվում է Փաշինյանի նամակներին, «Արթիկ» ՔԿՀ վարչակազմի կողմից դրանք չընդունելը այլևս ավանդական և առօրյա երևույթ է դարձել: «Արթիկ» ՔԿՀ-ի վարչակազմի գործելաոճը փոխվում է, և նրանք Նիկոլի նամակները ընդունում են միայն երրորդ անձի՝ դիտորդական խմբի անդամների կամ միջազգային կառույցների ներկայությամբ:

Նշված տեղեկատվությունը ստուգելու նպատակով 2011 թվականի փետրվարի 12-ին շաբաթ օրը, դիտորդական խմբի նախագահ՝ Արթուր Սաքունցի և խմբի անդամ՝ Էդմոն Մարուքյանի կողմից կատարվել է այցելություն «Արթիկ» ՔԿՀ, որի ժամանակ պարզվել է, որ դատապարտյալի մոտ գտնվող և ծրարավորված 5 նամակները «Արթիկ» ՔԿՀ-ի վարչակազմը հրաժարվում է ստանալ և առաքել, որոնց մեջ է նաև դիտորդական խմբի նախագահին հասցեագրված նամակը: Ինչպես նախորդ անգամ, դիտորդական խմբի անդամները «Արթիկ» ՔԿՀ օրվա հերթապահին և մյուս աշխատակիցներին առաջարկել են դիտորդական խմբի անդամների ներկայությամբ ստանալ ծրարները և գրանցել համապատասխան մատյանում, սակայն «Արթիկ» ՔԿՀ-ի ներկայացուցիչները գնացել են մատյանի ետևից և վերադարձել առանց մատյանի պատճառաբանելով, որ մատյանը գտնվում է չհրկիզվող պահարանում և այդ պահին հնարավոր չէ նամակները ստանալ և գրացնել մատյանում: Դիտորդական խմբի անդամները առաջարկել են կազմել արձանագրություն նամակները ստանալու մասին, որի տակ կստորագրեն նաև դիտորդները, սակայն այս դեպքում էլ «Արթիկ» ՔԿՀ-ի ներկայացուցիչները գնացել են, որպեսզի թուղթ բերեն արձանագրությունը կազմելու համար և վերադառնալով հայտնել են, որ իրենք արձանագրություն կազմող չեն և չեն կարող ստանալ Նիկոլ Փաշինյանի կողմից պատրաստված 5 ծրարները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել

միայն օրենքով սահմանված կարգով, դատարանի որոշմամբ, իսկ օրենքով նախատեսված անհետաձգելի դեպքերում՝ մինչև դատարանի որոշումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատապարտյալն իրավունք ունի՝ իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմ, նրանց վերադաս մարմիններ, դատարան, դատախազություն, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական միավորումներ և կուսակցություններ, զանգվածային լրատվության միջոցներ, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ կամ կազմակերպություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ դատապարտյալն իրավունք ունի՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և հնարավոր լրատվական միջոցներից:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալն իր առաջարկությունները, դիմումները և բողոքները կարող է ներկայացնել ամեն օր ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Գրավոր բողոքները ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում, ուղարկվում են հասցեատերերին: Դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները գրաքննության ենթակա չեն: Արգելվում է որևէ ձևով հետապնդումը դատապարտյալի նկատմամբ իր իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, բողոքներ ներկայացնելու դեպքում: Նման հետապնդում իրականացնող անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Այսպիսով, դիտորդական խումբն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունն ի դեմս ՀՀ Արդարադատության Նախարարության և ՔԿՀ վարչակազմի հետևողականորեն խախտում է դատապարտյալի վերը նշված տարրական իրավունքները, մասնավորապես նամակագրության և դիմումներ, բողոքներ ուղարկելու իրավունքները: Ինչ վերաբերվում է ՀՀ արդարադատության նախարարի կողմից նշանակված և անցկացված ծառայողական քննությանը և դրա արդյունքներին, ապա դիտորդական խումբը փաստում է, որ այն կատարվել է միակողմանի և հետապնդել է միայն գերատեսչական շահ, այլ ոչ թե միտված է եղել դատապարտյալի խախտված իրավունքների վեր հանմանն ու դրանց վերականգնման ուղղությամբ քայլեր կատարելուն:

ՀՀ Երևան, Պուշկինի 3, 2-րդ հարկ, 5-րդ սենյակ Pushkin str., 3 build, 2nd floor, 5th room
Yerevan, RA Tel / fax: (+37410) 55 96 34 e-mail: pmg.armenia@hra.am

Սույն հրատապ հաշվետվության ներկայացմամբ, ակնկալում ենք, որ դիտորդական խմբի կարգով սահմանված եռօրյա ժամկետում պատասխան կտրվի, իսկ ոչ իրավաչափ ՔԿՀ պաշտոնյաները կենթարկվեն պատասխանատվության և որ ամենակարևորն է դատապարտյալ՝ Նիկոլ Փաշինյանի նամակագրության և դիմում, բողոքներ ուղարկելու իրավունքի իրացումը որևէ կերպ չի խոչընդոտվի: Այլապես, արդարադատության նախարարության նոր ղեկավարության կողմից ձեռնարկված ցանկացած համակարգային և ռազմավարական բարեփոխման խոստում իմաստազուրկ է դառնում, քանի դեռ դատապարտյալի տարրական՝ նամակագրության և դիմումներ ուղարկելու իրավունքի իրացումը, չնայած բազմաթիվ ահազանգերին արդեն երկու ամսից ավելի է չի ապահովվում, ինչ մնաց համակարգային բարեփոխումներ իրականացվեն:

Հարգանքով,

խմբի նախագահ Արթուր Սաքունց

ՀՀ Երևան, Պուշկինի 3, 2-րդ հարկ, 5-րդ սենյակ
Yerevan, RA Tel / fax: (+37410) 55 96 34
Pushkin str., 3 build, 2nd floor, 5th room
e-mail: pmg.armenia@hra.am